096 40 97

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք.Երևան

«_____»_____2020թ.

04 նոյեմբերի 2019 թվականին կնքված սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» մասնաճյուղը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «Մատակարար», ի դեմս Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի Հանրապետության դատական դեպարտանենտ» հիմնարկը, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «Սպառող», ի դեմս դեպարտամենտի ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», իսկ յուրաքանչյուրը առանձին «Կողմ» կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի «Կողմերի վավերապայմանները» կետի «Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման հ/հ» մասում ավելացնել **2474610005796350**:
2. Պայմանագրի մնացած բոլոր կետերը թողնել անփոփոխ:
3. Սույն Համաձայնագրի պայմանները ՀՀ քաղ.օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետին համապատասխան կիրառվում են 01.02.2020թ.-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում կնքման (ստորագրման պահից):

Ի հավաստումն ինչի, Կողմերը վերը նշված ամսաթվին կազմեցին և կնքեցին սույն Համաձայնագիրը հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակներից (յուրաքանչյուր օրինակը հայերեն լեզվով)՝ մեկական օրինակ կողմերի համար:

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար	Սպառող
Գտնվելու վայրը՝ ք.Երևան Արմենակյան 127	Գտնվելու վայրը՝ ք.Երևան Վ.Սարգսյան 5
Գործունեության լիցենզիա՝ ԳԲ -01/20՝	Դեպարտամենտի ղեկավար
Գ.Բուռնազյան _____	Կ.Փոլադյան _____
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ ՀՎՀՀ/01520882 ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՆԵՐԳԱՄԻՐԱՑՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ	L.S.